Doi: 10.56737/2953-7843-2025.08-94

ԻՆԵՍԱ ԹՈՒՄԱՍՅԱՆՑ

# ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉ[1]

## ՆԱԽԱԲԱՆ

*1920-ական թվականներին Ռումինիայում լայն գործունեություն ծավալած եւ այստեղ հաստատված հայերն ստեղծում են մի շարք կազմակերպություններ, որոնք իրենց ներդրումն են ունենում տարբեր ոլորտներում՝ Հ.Բ.Ը.Մ. (Հայ բարեգործական ընդհանուր միություն), «Հայաստանեան Ճակատ» հայրենասիրական մշակութային ընկերություն, Ռումինահայ միություն, Կոմիտաս երաժշտական միություն, Աղքատախնամ ընկերություն, Հ.Մ.Ը.Մ. (Հայ մարմնակրթական ընդհանուր միություն), Կարմիր խաչ եւ Գթության խաչ կազմակերպությունների տիկնանց մասնաճյուղեր եւ այլն։*

*Ըստ հունգարացի ժամանակագիրների արձանագրությունների, հայերը Ռումինիայում հաստատվել են Ժ. դարում։ Արարել են ռումինական հողի վրա, կառուցել եկեղեցիներ, դպրոցներ եւ ունեցել մեծ ավանդ Ռումինիայի մշակութային եւ քաղաքական ոլորտներում։ Հե եպիսկոպոսական աթոռը այստեղ հաստատվել է 1401-ին՝ Ալեքսանդր Բարեպաշտի օրոք։ Հայերին տրամադրվել են տարածքներ, որոնք հետագայում նշվել են եւ ճանաչված են եղել որպես հայկական թաղամասեր կամ հայկական փողոցներ։*

*Անդրադարձ կատարելով Ռումինիայի ընդհանուր պատմությանը եւ հատկապես ԺԹ. դարի վերջ եւ Ի. դարի սկիզբ՝ տեսնում ենք տարբեր ազգերի՝ հայերի, հույների, գերմանացիների, ֆրանսիացիների, բուլղարացիների ներդրումը երկրի բարելավման գործում։ Տվյալ ազգերին մեծ արտոնություններ եւ հնարավորություններ էին տրվում երկրի քաղաքակրթական ոլորտները զարգացնելու գործում։ Այս է պատճառներից մեկը հայերին թույլտվություն տալու հիմնել դպրոցներ, գրադարաններ, թատերական ակումբներ, ասեղնագործության խմբակներ, երգչախմբեր եւ*

---

[1]* *Ստացվել է՝ 6.06.2025, գրախոսվել է՝ 7.07.2025։ Էլ. հասցե՝* inesa.workpage@outlook.com:

*առհասարակ ունենալ խոսքի կշիռ քաղաքական, կրթական եւ մի շարք այլ ոլորտներում։*

*ԺԹ. դարի վերջում Ռումինիայում սկսվում է անկախության պատերազմ։ 1877-ին Ռումինական Միացյալ Իշխանությունների թագավոր է հռչակվում արմատներով գերմանացի Կարոլ Ա.-ն։ Նրա կինը՝ Եղիսաբեթը, դառնում է Ռումինիայի առաջին թագուհին։ Թագուհի Եղիսաբեթը պատերազմի ընթացքում եւ առավել եւս հետպատերազմյան շրջանում երեւելի մի շարք ընտանիքների կանանց հետ միասին սկսում է օգնել կարիքավորներին։ Այստեղից առաջանում են գթության եւ բարեգործական նմանատիպ կազմակերպություններ։ 1876 թ-ին Ռումինիայում հիմնադրում է Կարմիր խաչի ռումինական մասնաճյուղը։*

*Կարմիր խաչ միջազգային կոմիտեն (վերանվանված այս անունով 1876-ին) հիմնադրել է 1863-ին Դյունանը (այդ ժամանակ՝ «Հնգյակի կոմիտե», ապա՝ «Վիրավորներին օգնության միջազգային կոմիտե»), նպատակ ունենալով զարգացնել ռազմադաշտում բժշկական ծառայությունների որակը։*

*Շատ քչերին է հայտնի, որ Ռումինիայում եւս գործել է Հայ Կարմիր խաչ կազմակերպության՝ տիկնանց մասնաճյուղը եւ ծավալել եռանդուն գործունեություն։ Այս ամենն ապացուցում են Ռումանիոյ հայոց թեմի Առաջնորդարանի գրեթե 400 տարվա արխիվում պահվող փաստաթղթերը, արձանագրությունները, հին նամակները։ Բավականին հետաքրքրաշարժ են Ռումինիայի Հայ Կարմիր խաչի գործունեության մասին նյութերը, որոնց այժմյան ուսումնասիրությունը երեւան կհանի մի շարք հարցերի պատասխաններ եւ կլուսաբանի որոշ վարկածներ, ինչպես նաեւ ցույց կտա կապը Բուլղարիայի, Կ. Պոլսի, Հայաստանի Հայ Կարմիր Խաչի մասնաճյուղերի հետ։*

*Հարկ է նշել հանգամանքը Արխիվում պահվող Գթության խաչ կազմակերպությանը պատկանող փաստաթղթերի, որոնք նույն թղթապանակի մեջ են Հայ Կարմիր խաչի վերաբերյալ նյութերի հետ։ Այս ուսումնասիրությամբ կփորձենք հասկանալ՝ արդյո՞ք Գթության խաչ կազմակերպությունը կատարել է նույն գործառույթը, ինչ Հայ Կարմիր խաչը, արդյո՞ք եղել է նույն կազմակերպությունը՝ միայն վերանվանված, կամ ո՞ր կազմակերպությանն է պատկանել։*

*Հայ Կարմիր խաչն առաջին անգամ կազմավորվում է Ամերիկայում 1912 թվականին, որից հետո՝ 1920-ին, միայն Հայաստանում, երբ Հա-*

*յաստանի Առաջին Հանրապետության խորհրդարանը վավերացնում է Հ.Կ.Խ.Ը. կանոնադրությունը։*

* * *

*Հայաստանի Առաջին Հանրապետության ժամանակ Հայ Կարմիր Խաչի կազմակերպության հաստատումը Հայաստանում եւ Ռումինիայում Հայ Կարմիր խաչի՝ Բուխարեստի տիկնանց մասնաճյուղ ստեղծելու նախաձեռնությունը ի հայտ են գալիս գրեթե նույն ժամանակահատվածում՝ օրերի տարբերությամբ։ Հայաստանում խորհրդարանը վավերացնում է կանոնադրությունը 1920 թ. մարտի 19-ին, իսկ նախքան դա, նույն թվականի մարտի 11-ին, հավաքվելով Տիկին Սուքիասյանի բնակարանում, համայնքի կանայք առաջարկով են հանդես գալիս, այն է՝ ստեղծել պետական Հայ Կարմիր խաչի մասնաճյուղ Ռումինիայում։*

*Արձանագրությունների տետրից[2] տեղեկանում ենք, որ նույն օրը տիկնայք որոշում են ընդունում՝ հիմնել կենտրոնական կոմիտե։ Կազմվում է վարչական մարմինը, որոշվում է նաեւ նամակ գրել Կ. Պոլսի Հայ Կարմիր խաչի կենտրոնական գրասենյակին՝ հայտնելու կայացրած որոշման մասին, խնդրելու տրամադրել կանոնագրի մեկ օրինակ եւ վարչությանը հատուկ կնիք։ Նամակ է ուղարկվում նաեւ Բուխարեստի հայկական միություն, տեղեկացնելու համար նորակազմ ընկերության մասին։*

*Վարչական մարմինը կազմեցին հետեւյալ անձինք՝*

*Տիկին Երանուհի* Կոնիկեան *– ատենապետուհի,*
*Տիկին Զինոբիա* Սուքիասեան*) – ատենադպիր,*
*Տիկին Մարի* Բարակեան *– փոխատենադպիր,*
*Տիկին* Անժէլ Օտապաշեան*) – գանձապետուհի,*
*Տիկին* Եսթէր Թակթակիան *– խորհրդատուհի*
*Տիկին Արմենուհի* Պոյաճեան *– խորհրդատուհի*
*Տիկին Վիրջին* Մարտիկեան*) – խորհրդատուհի*

---

[2] *«ՏԵՏՐ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ, Պետական Կարմիր Խաչի Պուքրէշի Հայ Տիկնանց Մասնաճիւղին, կազմուած 1920 մարտ 11 ին», Ռումանիոյ հայոց թեմի Առաջնորդարանի արխիւ՝ այսուհետ ՌՀԹԱԱ, փաստաթղթի համար 95, տուփ 5, 1920 թ.։*





Նույն թվականի հոկտեմբերի 5-ի նիստում[3] հաստատվում է Կոնստանցայի մասնաճյուղի վարչությունը: Նոյեմբերի 12-ի նիստում կարդացվում է նամակ Սիլիստրայում վերջերս կազմված մասնաճյուղի վերաբերյալ, որը վկայում է Ռումինիայում գործող երրորդ մասնաճյուղի մասին[4]:

Կենտրոնական մասնաճյուղն առաջին իսկ նիստից սկսում է աշխատանքները՝ պարզ գիտակցելով, որ օրակարգում առաջնային քննարկվող հարցը գումար հավաքելն է: Տարբեր եղանակներով քայլ առ քայլ գումար հավաքելուց հետո, որոշվում է գնել հայ բանակի համար նախատեսված 410 զույգ ճերմակեղեն, որը 1921 թ-ի հունվարի 2-ի նիստում որոշվում է ուղարկել Հայաստան՝ Կիլիկիայի միջոցով: Այս մասին վերջնական որոշումը հաստատվում է փետրվարի 15-ի նիստում, նամակ է գրվում՝ հասցեագրված Կ. Պոլսի Հայ Կարմիր խաչի մասնաճյուղին: Տվյալ նիստում է նաեւ առաջին անգամ նախագահում Գրիգոր Զալխուշյանը (Զալխուշեան)[5]: Նա 1920 թ-ից զբաղեցնում էր Հայաստանի Կարմիր խաչի կենտրոնական վարչության նախագահի պաշտոնը:

---

[3] «ՏԵՏՐ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ, Պետական Կարմիր Խաչի Պուքրէշի Հայ Տիկնանց Մասնաճիւղին, կազմուած 1920 մարտ 11 ին», ՌՀԹԱԱ, փաստաթղթի համար 95, տուփ 5, 1920 թ.

[4] «ՏԵՏՐ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ, Պետական Կարմիր Խաչի Պուքրէշի Հայ Տիկնանց Մասնաճիւղին, կազմուած 1920 մարտ 11 ին», ՌՀԹԱԱ, փաստաթղթի համար 95, տուփ 5, 1920 թ.:

[5] «ՏԵՏՐ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ, Պետական Կարմիր Խաչի Պուքրէշի Հայ Տիկնանց Մասնաճիւղին, կազմուած 1920 մարտ 11 ին», ՌՀԹԱԱ, փաստաթղթի համար 95, տուփ 5, 1920 թ.:





*Ելնելով Կ. Պոլսից ստացած պատասխան նամակի բովանդակությունից եւ առաջարկած ճանապարհից՝ ընդունվում է մեկ այլ որոշում՝ ճերմակեղենները ուղիղ ճանապարհով տանել Հայաստան: Մինչ այդ, հունվարի 25-ի նիստում, նկատի ունենալով Կ. Պոլսի հայ որբերի կարգավիճակը, ինչպես նաեւ Բուխարեստում արդեն իսկ առկա Որբախնամ ընկերության գոյությունը, որոշվում է նաեւ 5000 լեյ (այն ժամանակվա արժեքով) գումար հանձնել ընկերության տնօրինությանը[6]:*

*1921 թ-ի հունիսի 7-ի՝ 23-րդ նիստում, տեղյակ լինելով Հայաստանում տիրող սովի մասին, որոշում կայացվեց ընկերության պահած 25 000 լեյ գումարը, որին գանձապետը ավելացումներ անելուց հետո, թիվը հասցրեց 45 000 լեյի, ուղարկել Հայաստան: Հաջորդ նիստում գումարի փոխանցումը որոշվեց կատարել հետեւյալ կերպ. տեղացի վաճառականներ Պ. Թումպաճեանի եւ Թէրշերեանի միջոցով ուղարկել Կ. Պոլիս Հ.Կ.Խ.-ի նախագահ Մ. Սթամպուլիանին, որպեսզի վերջինս էլ իր հերթին տվյալ գումարն ուղարկի Հայաստանի սովի մատնված ժողովրդին՝ Կ. Պոլսի Հ.Կ.Խ.-ի միջոցներով[7]:*

---

[6] *«ՏԵՏՐ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ, Պետական Կարմիր Խաչի Պուքրէշի Հայ Տիկնանց Մասնաճիւղին, կազմուած 1920 մարտ 11 ին», ՌՀԹԱԱ, փաստաթղթի համար 95, տուփ 5, 1920 թ.:*

[7] *«ՏԵՏՐ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ, Պետական Կարմիր Խաչի Պուքրէշի Հայ Տիկնանց Մասնաճիւղին, կազմուած 1920 մարտ 11 ին», ՌՀԹԱԱ, փաստաթղթի համար 95, տուփ 5, 1920 թ.:*







*Բուխարեստի մասնաճյուղը նամակ է ուղարկում Կոնստանցայի մասնաճյուղին խնդրանքով, գումարը՝ 60 000 լեյ-ը, Կ. Պոլսին հատկացնելու փոխարեն ուղարկել Հայաստանի սովյալներին, նշելով՝ «Պոլիս արդէն բաղաթիս Որբախնամի կողմանէ կարեւոր գումար մը արդէն ղրկուած է»[8]։*

*Արխիվային տարբեր նամակներում կա նաեւ մեկը՝ թվակիր 92 նամակը, գրված 1922 թ. հունվարի 6-ին, Բուխարեստի Կենտրոնական վարչության անունից եւ ուղղված է Ֆոքշան, Պարոն Մ. Միրախորյանին (Միրախորեան)։ Նամակում գրվում է, որ Կարմիր խաչի Սիլիստրայի մասնաճյուղի հանձնարարությամբ իրենց է ուղարկվում թվով 40 պատի օրացույց՝ ռումիներեն եւ հայերեն, առանց սահմանելու գինը. «...իւրաքանչիւր գնորդի մարդասիրական եւ հայրենասիրական զգացումին համեմատական»[9]։*

---

[8] *«ՏԵՏՐ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ, Պետական Կարմիր Խաչի Պուքրէշի Հայ Տիկնանց Մասնաճիւղին, կազմուած 1920 մարտ 11 ին», ՌՀԹԱԱ, փաստաթղթի համար 95, տուփ 5, 1920 թ.։*

[9] *Հ. Կարմիր Խաչ կեդր. Վարչութիւն,* no. *92, Պուքրեշ 6 յունուար 1922, ՌՀԹԱԱ, թղթապանակ 70, տուփ 4։*



Նույնչափ ուղարկվել է Բրքիլա եւ տարբեր քանակությամբ այլ քաղաքներ: Կարգադրելով հասույթը ուղարկել Կենտրոնական վարչություն:

Արխիվում գտնվում է նաեւ 1923 թ-ի Կարմիր Խաչի նվիրատուների փոքրիկ ցուցակ[10], Գ. Զալխուշյանի հոբելյանի առթիվ: Գրված են անձանց անունները, թվականը, նվիրատվության չափը եւ գանձողի ստորագրությունը: 1919 թ. Հայաստանի կառավարությունը Գրիգոր Զալխուշյանին նշանակում է Դոնի Ռոստովում ՀՀ ներկայացուցիչ, որից հետո 1920 թ-ին տեղափոխվում է Կ. Պոլիս եւ մնում այնտեղ, սակայն Ռումինիայի հայ համայնքի հետ ունեցած իր կապի մասին քիչ են տեղեկությունները կամ ընդհանրապես չկան: Ուստի Զալխուշյանի ներդրումի մասին տեղեկանում ենք արխիվում գտած, հ. 141, 1923 թ. հունվարի 5-ի, նամակի բովանդակությունից եւ իրեն տրված վկայականի հավանաբար սեւագրության շնորհիվ, որոնք ներկայացված են ստորեւ[11].







---

[10] ՌՀԹԱԱ, թղթապանակ 141, տուփ 6:

[11] ՌՀԹԱԱ, թղթապանակ 133, տուփ 6:



Վկայագիր

Դ՝ Հ՝ Գ՝ Ի՝ Ա՝ Ն՝ Ի՝ Ա՝ Ն՝ Ի՝ Ա՝ Ն







*25 240 լեյի թիվ 1019 չեկը՝ ստացված* Տիար Եղբարք Ապաճիեւի *կողմից եւ հայտնում է իր շնորհակալությունը.* «Հայ ժողովուրդի գլխուն եկած այս ծանր աղէտի ժամանակ Պատ. Վարչութեանդ ցոյց տուած եռանդն ու պատրաստակամութիւնը ամեն գովեստէ վեր է»*: Ստորեւ հայտնում են հագուստեղենի մասին, որը գտնվում էր Ռուսճուքի (այժմ Ռուսե) մաքսատանը, արկղերը վնասված վիճակում էին, ուստի Սոֆիա տեղափոխելը անկարելի է: Սոֆիայի կենտրոնի ցուցմունքների համաձայն Ռուսեի մասնաճյուղին կարգադրվում է բաժանել եւ դասավորել ստացված ապրանքը: Բուխարեստին խնդրում են ուղարկել հագուստեղենի ցուցակը՝ համեմատելու այն Ռուսեից ստացած ցուցակի հետ:*

*Չի ուշանում նամակը նաեւ Ռուսճուք քաղաքի մասնաճյուղից՝ գրված 1923-ի փետրվարի 7-ին: Տվյալ նամակը մյուս նամակների հետ միասին վկայում է Ռումինիայից դուրս կատարված ծավալուն աշխատանքի մասին:*

*Հայերեն գրված նամակների կողքին բազում են նաեւ ռումիներեն նամակները: Դրանցից մեկը ստորեւ ներկայացնում ենք*[14]*, ցույց տալու համար, որ բացի ֆինանսական օգնություններից դեպի Հայաստան, Բուլղարիա, Կ. Պոլիս, կազմակերպությունն իր կարողությունների սահմաններում օգնում էր նաեւ Ռումինիայում ապրող հայրենակիցներին: Տվյալ նամակը խնդրանք է տեղի հիվանդանոցին՝ անվճար բուժօգնու-*

[14] *ՌՀԹԱԱ, թղթապանակ 141, տուփ 6:*

թյուն տրամադրել պարոն Ավետիս Երանոսյանին։ Նամակներ կան, որոնք դիմում են տվյալ անձին աշխատանքով ապահովելու խնդրանքով։ Կարող ենք եզրակացնել, որ Հայ Կարմիր Խաչի Բուխարեստի մասնաճյուղը, իր կնիքը եւ նամակները կարճ ժամանակահատվածում կշիռ սկսեցին ունենալ Ռումինիայի տարածքում։


ՀԱՅ Կ. ԽԱՉԻ
ԿԵՆԴ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
ԳՈՒՔԷՍ

SOCIÉTÉ DE LA CROIX ROUGE
ARMENIENNE
BUCAREST

Nº 138

Bucureşti 4/5. 923

Dum Zilei
Sef. al Spitalului

Societatea crucia Roşu Armeana vă roagă f. mult să binevoiţi a primi în Spitalul Dv.stră pentru a fi îngrijit bolnavul D. Avedis Eranosian.

Răspunzând ne despunand de mijloace Societatea vă roagă să binevoiţi al primi să fie îngrijit gratuit.

Primiţi vă rog Dlui Doctor odata cu mulţumirile noastre şi sinceritile considerăţiuni.—

Secretară
Keropian

Preşedintă
Eftigie Tatikeucian

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉ
ԳՈՒՔԷՍԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Բազմաթիվ արձանագրությունների կողքին է գտնվում Ա.Ե.Հ.Կ. խաչի շրջանային վարչության առաջարկների ցուցակը[15], ըստ որի՝ օրակարգում քննարկվող 6-րդ եւ 7-րդ կետերը վերաբերում են Կարմիր խաչ կազմակերպության անվանափոխությանը Գթության խաչի։ Հայ Գթության խաչը կազմվում է Հայաստանից դուրս գտնվող բոլոր վայրերի Հայ Կարմիր խաչերի միություններից։

Այստեղից ելնելով՝ չենք զարմանում բազմաթիվ այն փաստաթղթերից, որոնք վերաբերում են Գթության խաչին եւ տվյալ անվան տակ ծավալում են նույն գործունեությունը, ինչ Կարմիր խաչը, կամ նույն արձանագրությունների տեսրում տեսնում ենք է՛ւ Հայ Կարմիր խաչ անունը, է՛ւ Հայ Գթության խաչ։

[15] ՌՀԹԱԱ, թղթապանակ 279, տուփ 10։

*1930 թ. հունիսի 14 ամսաթիվը կրող եւ համար 44 թվի տակ գրանցված տվյալ շրջաբերականից զատ՝* «Նամակներու Ելից Տոմար. Ռ. Հ. Գ. Խաչի Կեդր. Վարչութիւն, 15 հոկտ. 1929 – 14 ունու. 1931»[16] *արձանագրությունների գրքում առկա է նամակ՝ գրված 1929-ի հոկտեմբերի 15-ին՝ ուղղված Ամերիկայի Հ. Կ. Խաչի կենտրոնական վարչությանը: Նամակում նշվում է, որ 1929-ի հոկտեմբերի 8-ին Բուխարեստում կազմավորվել է Ռումանահայ Գթության խաչը:*

*Նամակից երեւում է, որ մասնաճյուղեր եղել են նաեւ Կոնստանցայում եւ Պազարջիկում:*



Արեւելեան Ս. Հ. Գ. Խաչի Երբանային Վարչութեան առաջարկները Ընդհ. Պաշտամունական ժողովին (որ պիտի գումարուի Դեկտեմբերի 1930 Գ. Գուլիս 9-ին) օրակարգի կէտերու մասին.

---

Ի-ՐԴ ԿԷՏ

Այս կէտերու մասին Երբ. Վարչութիւնը որեւէ առաջարկ չունի.

Տ-ՐԴ ԿԷՏ

Այս կէտի քննութիւնը Երբ. Վարչութիւնս կը լեռազգէ մինչեւ անոր մասին մասնակիցներու կարծիքները առնելու.

Գ-ՐԴ ԿԷՏ

Հայ Գ. Խաչի կազմակերպութիւնները ժողովրդերկիրներու մէջ անուանել Հայ Դեռնեան Խաչ (Ամերիկահայ Դեռնեան Խաչ, Ռումանահայ Դեռնեան Խաչ, Սուրիահայ Դեռնեան Խաչ եւն) Օտար լեզուով մեր կազմակերպութեան յորդորումը պիտի ըլլայ Հայ Դեռնեան Խաչի բառացի թարգմանութիւնը.

Շ-ՐԴ ԿԷՏ

Կնճռի ուսումնարկ մ Ս. Ս. Հ. Գ. Խաչի Գ. Պաշտ. Ժողովի որոշումները Կազմակերպական Ընդհանուր Դրագիր-Դանոնագրին քննութեան առեն հիմք դարձնել Ամերիկայի Հ. Գ. Խաչի Դրագիր-Դանոնագիրը անոր մէջ կատարելով հետեւեալ փոփոխութիւնները.

Ա.- Դրագիր-Դանոնագիր վերտառութիւնը փարձնել Ընդհանուր Դանոնագիր Հայ Դեռնեան Խաչի.

Բ.- Անուն բաժինը խմբագրել այսպէս.

Հայ Դեռնեան Խաչ կազմուած է Հայաստանէն դուրս գտնուած ժողովրդերու Հայ Կարմիր Խաչերու Միութենէն.

Հայ Դեռնեան Խաչի իւրաքանչիւր հաստատ կը գործէ հանդարտաստան երկրին Դեռնեան Խաչի անուանով (Ամերիկահայ Դեռնեան Խաչ, Գուլահայ Դեռնեան Խաչ եւն) իսկ տեղական իշխանութիւններու կամ օտար շրջանակներու հետ յարաբերած առեն, կրնայ կոչուիլ օտար անուանով որ պիտի ըլլայ բառացի թարգմանութիւնը Հայ Դեռնեան Խաչին.

Գ.- Կանոնակ բաժինը խմբագրել այսպէս.

Հայ Դեռնեան Խաչի Նպատակնէ

Ա.- Պատերազմի, հանգարտականներու, երկրաշարժի եւ այլ աղէտներու ժամանակ օգնել հայկական գաղթի եւ Հայ ժողովրդի, ուր որ ալ ըլլայ անոր.

Բ.- Հնանել պատերազմի եւ հայ ազգասպրական կռիւներու մէջ հայ մանդամ դարձած հայ գաղթականներն ու կամաւոր մարտիկները եւ հոգ տանիլ որ

*Ստորեւ կցում ենք նաեւ վերը նշված* «Նամակներու Ելից Տոմար. Ռ. Հ. Գ. Խաչի Կեդր. Վարչութիւն, 15 հոկտ. 1929 – 14 հնվ. 1931» *արձանագրությունների գրքից, 1920–1929 թթ. տեղեկագիրը, որտեղ մանրակրկիտ ներկայացվում է Հայ Կարմիր խաչի ամբողջ գործունեությունը: Տեղեկագրի սկզբում գրվում է «Կ. Խաչի»՝ Կարմիր խաչի, ապա վերջում՝ «Ռ. Հ. Գ. Խաչի»՝ Ռումինիայի Հայ Գթության խաչի: Այստեղից եւս մեկ անգամ համոզվում ենք՝ կազմակերպությունը նույնն է, գոր-*



[16] *ՌՀԹԱԱ, թղթապանակ 281, տուփ 10:*

*ծում է նույն սկզբունքով իր հիմնվելուց ի վեր՝ փոխելով միայն անվանումը «Հայ Գթութեան Խաչ»-ի:*







*Այս ամենը կազմակերպության գործունեության մի փոքր մասն է, սակայն սա եւս լիովին բավական է ցույց տալու, որ Ռումինիայում ոչ միայն եղել են, այլ եռանդուն եւ ահռելի աշխատանք են կատարել Հայ Կարմիր Խաչի տիկնանց Բուխարեստի, Կոնստանցայի, Սիլիստրայի, հետագայում Պազարջիկի մասնաճյուղերը: Եւս մեկ ապացույց, որ հայերը ռումինական հողի վրա ինչքան արտոնություններ են ունեցել եւ անկախ ամեն ինչից միջոցներ ու ուղիներ են գտել Հայաստանաբնակ հայերին եւ ոչ միայն, հագուստեղենով, գումարով ու դեղորայքով օգնելու: Իրերը փոխանցելու համար գտնվել են տարբեր ճանապարհներ,*

*կազմակերպությունը օգտվել է իրեն ընձեռած յուրաքանչյուր հնարավորությունից։ 1924-ի հունվարի 1-ի, 6-րդ նիստին[17] ներկա է գտնվում թեմի առաջնորդ Հայր Հուսիկ վարդապետ Զոհրաբյանը, որն իր հերթին առաջարկում է Հայաստանին հատկացված դեղորայքն անձամբ տանել։ Նույն թվականի փետրվար ամսվա նիստերի արձանագրություններից տեղեկանում ենք՝ Ստրունգայի որբանոցը, ուր ցեղասպանությունից փրկված հայ երեխաներ էին, դիմում է Հայ Կարմիր խաչին՝ խնդրելով օգնություն։ Որոշում է կայացվում օգնել անհրաժեշտ դեղորայքով, որի կարիքը ամենաշատը ուներ ռումանահայ որբանոցը։*

*ԺԹ. եւ Ի. դարերն ամբողջ աշխարհում եղել են աշխարհագրական, քաղաքական փոփոխություններով լի անհանգիստ դարաշրջաններ։ Ուստի տվյալ թվականներին նման կազմակերպությունների բուռն զարգացումը ամենեւին զարմանք չի առաջացնում, այլ հանդիսանում է բնական գործընթաց, որի մի մասը կազմել են նաեւ Ռումինիայում բնակվող հայերը։ Հայոց ցեղասպանությունից հետո, ապա Հայաստանի առաջին Հանրապետության կազմավորումից հետո, երկրին եւ հայերին պետք էր օգնություն։ Ռումինահայերը միահամուռ ուժերով կարողացել են անել այն ինչը թերեւս շատ քիչ համայնքներին է հաջողվել նման ճգնաժամային շրջանում։ Իհարկե այս ամենին նպաստել են միասնական լինելը, մեծ ցանկությունը, պետության հետ ունեցած բարենպաստ հարաբերությունները եւ հայերի մեծ ավանդը երկրի զարգացման գործում։*

*Ներկայացնելով Ռումինիայի հայոց թեմի առաջնորդարանի արխիվում պահվող Հայ Կարմիր Խաչին եւ Հայ Գթության խաչին վերաբերող փաստաթղթերի մի մասը՝ խոստանում ենք շարունակել առավել մանրակրկիտ եւ ծավալուն աշխատանքով։ Չունենալով առհասարակ ոչ մի տեղեկություն Ռումինիայում նման կազմակերպության գոյության մասին՝ այս հոդվածը միտված է նախ եւ առաջ արձանագրելու այդ կազմակերպության գոյության փաստը, ապա՝ կատարած ազգանվեր աշխատանքը։*

---

[17] *ՌՀԹԱԱ, թղթապանակ 202, տուփ 8։*

## ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Ռումինիա, Կարմիր խաչ, Հայաստան, ցեղասպանություն, Գայ Գթության խաչ:

## РЕЗЮМЕ

Настоящее исследование, основанное на архивных материалах Армянской епархии Румынии, раскрывает историю и деятельность Армянского Красного Креста (позднее – Армянского Креста Милосердия) и его женских отделений в Бухаресте, Констанце, Силистре и позднее Пазаржике. Архивные документы показывают, что армянские благотворительные инициативы в Румынии возникли на фоне многовекового присутствия армян, заселивших эти земли с X века и внесших значительный вклад в культурную и политическую жизнь страны.

В марте 1920 года в Румынии был создан Армянский Красный Крест – практически одновременно с его учреждением в Первой Республике Армения. Женский комитет, сформированный в доме госпожи Сукиасян, избрал правление, установил связь с константинопольским отделением и начал активный сбор средств, отправляя в Армению бельё, деньги и медикаменты, особенно во время голода 1921 года. Организация помогала также армянским сиротам в Константинополе и местным нуждающимся.

Позднейшие документы подтверждают существование дополнительных отделений, тесное сотрудничество с армянскими комитетами Болгарии и практические пути доставки финансовой и материальной помощи. Письма свидетельствуют о правильном и целевом распределении средств, что укрепило доверие к организации. Значительную роль сыграл профессор Григор Чалхушян, предотвративший её ликвидацию в 1922 году и давший новый импульс работе.

К концу 1920-х годов организация постепенно стала именоваться «Армянским Крестом Милосердия», сохранив при этом все направления своей гуманитарной деятельности. Архивные материалы демонстрируют масштаб проделанной работы, самоотверженность армянских женщин и высокую ответственность румынских армян перед Арменией и армянскими беженцами в послегеноцидный и раннереспубликанский период. Статья впервые системно представляет важную и малоизвестную страницу истории армянской благотворительности в Румынии.

## SUMMARY

This study, based on archival materials from the Armenian Diocese of Romania, reveals the history and activities of the Armenian Red Cross (later the Armenian Cross of Mercy) and its women's branches in Bucharest, Constanta, Silistra, and later Pazardzhik. Archival documents show that Armenian charitable initiatives in Romania arose against the backdrop of the centuries-long presence of Armenians, who settled in these lands in the 10th century and made a significant contribution to the cultural and political life of the country.

The Armenian Red Cross branch in Romania was founded in March 1920–almost simultaneously with the establishment of the Armenian Red Cross in the First Republic of Armenia. The women's committee, initiated at Mrs. Sukiasyan's residence, elected its administrative board, corresponded with the Constantinople branch, and began actively raising funds, sending linen, money, and medicine to Armenia, especially during the famine of 1921. The organization also helped Armenian orphans in Constantinople and local people in need.

Later documents confirm the existence of additional branches, close cooperation with Armenian committees in Bulgaria, and practical ways of delivering financial and material aid. Letters testify to the proper and targeted distribution of funds, which strengthened confidence in the organization. Professor Grigor Chalkhushyan played a significant role in preventing the dissolution of the branch in 1922 and giving new impetus to its work.

By the end of the 1920s, the organization gradually became known as "Armenian Cross of Mercy", while retaining all areas of its humanitarian activities. Archival materials demonstrate the scale of the work accomplished, the dedication of Armenian women, and the high level of responsibility of Romanian Armenians towards Armenia and Armenian refugees in the post-genocide and early republican period. This article is the first systematic presentation of an important and little-known page in the history of the Armenian charity in Romania.